

ԵՐԱԶՆԵՐՈՐ ԿՂԶԻՆ

Ա. - «ԵՂԻՑԻ»

Կը բարձրանար կղզիէն վեր բլրաձեւ,
Ամէն քարի վրան արցունք բողբոջով.
Կանքեղի պէս հոգին վառած լոյս քեքեւ,
Ուխտի կ'երթար՝ սիրտը մատաղ տանելով:

Եկեղեցի մ'այնտեղ կանգնած վաղեմի,
Զունէր մոմեր, դռներն էին կիսաբաց,
Կը սպասէր որ գար արեգակն աղօթքի
Եւ լընակին ալիքն ըլլար երգասաց:

Յոգնավաստակ եւ արիւնոտ ոտներով,
Խորանին դէմ, հաւատքին հետ ծնրադիր,
Աղօթեց լուռ եւ լեցուեցաւ արցունքով,
Առաւօտեան ինչպէս շուշան ցօղալիր:

Ո՛հ, այդ աչքերն աստղերուն հետ աստղ էին,
Եւ շրթունքներ՝ ծիածան կարմրաքել.
Պատանի էր, շատ փուշ ունէր իր սրտին,
Կ'ուզէր իր ցան Աստուածամօր լոկ յայտնել:

Եւ այդ կղզին՝ ուր հաւաքեց պատմութիւնն
Աւերակներ, սայրասուր քար ու ժայռեր,
Որ ունէր լոկ խաչի համբուն տրտմութիւնն,
Սիրելի էր նգնաւորին խստամբեր:

Շուրջը, սակայն, չինջ կուսութիւնը լինին,
Կը ցոլանար երկինքներէն ալ անդին.
Երազանք մ'էր, որուն հագար քեւ տըւին,
Ամէն հայու աչքերուն մէջ ծագելու:

Եկեղեցին լուռ էր, ինչպէս մութ քարայր,
Սուրբերն էին վերադարձած դէպ'երկին.
Բոյրը խունկին հին օրերէն կը մընար,
Յաւերուն հետ՝ որ հէգ մայրերը բերին:

Խորանէն վեր՝ քախծալի մայր մը տեսաւ,
Տեսաւ Մանուկն արդէն խաչուած իր սիրով.
Վիշտն իր խառնեց, ցաւը ցաւին միացաւ,
Եւ Տիրամօր ոտքը լըւաց արցունքով:

Սիրտը խոցուած, պաղատանքներ շատ ունէր,
Կ'ուզէր երկինքն իր աչքերուն դէմ բացուէր.
Ու մէկը գար, հանէր փուշերն իր սրտին,
Եւ մայրօրէն ձեռքով արցունքն իր սրբէր:

Քալած էր նա աւերակէ աւերակ,
Կուրցած աչքերն՝ հէգ հայրենիքն ողբալով.
Շող մը տային իր ձեռքերուն մէջ նըրագ,
Որ Մասիսի վըրայ փոխուէր արեգակ:

Խօսքերն անոր աղօթք էին, շարական,
Ամէն մէկ քառ՝ խորունկ կսկիծն իր ցեղին.
Սիրտ եւ ամբողջ ժամի երգերն հայկական,
Եւ շատ նըման անմեղներու հաւատքին:

* * *

Արեւն արդէն գրկած կղզին Սեւանի,
Լընակին մէջ կը շողշողար աւելի.
Սուրբ էր այդ օրն՝ հըրաշքն ինչպէս Նարեկի,
Որ ծովերէն կ'երթար Առտէր աղօթքի:

Բայց ժամին մէջ, առանց մոմի եւ խունկի,
Լոյս մը ծագեց, որուն նման չէր տեսած.
Պատերն առին գոյնն ոսկեքել բեհեզի,
Աղամանդով ամբողջ յատակն էր հիւսուած:

Դէմքեր ժպտուն, իրենց փափուկ քեւերով,
Սարդիտատայն ու փոշիներ սրբեցին.
Հարսանեկան առագաստի ֆօղերով՝
Ամպեր իջան, որոնք շուշան, վարդ էին:

Եւ պատանին սիրտը դըրած խորանին,
Զաւակն ինչպէս մօրը կուրծքին կը փարի,
— Ո՛վ մայր, ըսաւ, տուր ինձ հանո՛յքը վշտին,
Խաչով ապրիլ, որ յաղթանակն է կեանքի:

Քեզ կը բերեմ ինչ որ հաւատքն ինձ տըւաւ,
Եւ սիրտս ընտրեց բանալ լոյսի նաւապարհ.
Շատ կան կոյրեր, մարած օնախ, ծածուկ դաւ,
Ո՛րքան արցունք՝ Ախուրեանի հաւասար:

Տե՛ս, հայրենի անդաստաններն են խալան,
Վանքեր՝ քափուր, եւ մեր հաւա՛տքը կոխան.
Հոս տնկեցին առաջին խաչն յաղթական.
Ո՛վ, մայր, ի՞նչպէս լըքել խաչուած Հայաստանն —:

Յանկարծ երկինքն անհորիզոն բացուեցաւ,
Հագար դէմքեր մեր շարականն երգեցին.
— Փափուկ դրախտին դուռն ոսկեղէն բանալին,
Գրկած Յիսուս, դու նըման ես երկնքին:

Ոսկի սափոր, ուր պահեցին մանանան,
Անարատ կոյս Աստուածածին Մարիամ.
Գեղեցկութեամբդ հըրեշտակներ կը ցնծան,
Դու հարս երկնի, դու ես ծաղիկ անթառամ —:

Եւ աղփատիկ պատկերն եղաւ արեգակ,
Կոյսն երկնային, կուսաններու մէջ երկու,
Բացաւ քեւերն՝ ինչպէս ծաղկած բարունակ,
Այնքան մօտիկ համբուրելու, սիրելու:

Ձայնեց մեղմիկ. — Ի՞նչ կ'ուզես դու, Մըլիքա՛ր —:
Շատ վիշտ ունէր, շատ բան կ'ուզէր պատանին,
Կ'ուզէր որ նա Հայաստանի մայր ըլլար,
Կ'ուզէր որ գար հանէր փուշերն իր սրտին:

Ոտներուն տակ արիւնքաքալս հող մը կար,
Հագար փառքեր եւ տանարներ քանդուած.
Կ'ուզէր որ նա Հայաստանի մայր ըլլար,
Սրբէր արցունքն հէգ որբութեան ծովացած:

Եւ աշնայնի տերեւ մ'ինչպէս դողդոջուն,
Որ արեւէն ճանաչեցներու կը սպասէ,
Պատասխանեց. — Այն կ'ուզեմ, Մա՛շր, ինչ որ դուն
Կը փափաքես. գիտեմ բոլ սէրդ անհուն է—:

— Եղիցի՛ քեզ, հագար անգամ եղիցի —.
Լոյսերու մէջ բարբառեցաւ Տիրուհին.
Եւ ինչպէս շողն ամպերուն մէջ կ'ամփոփուի,
Վերացաւ նա երգերուն հետ միասին:

Ո՛հ, տեսիլն այդ քիչ մ'ալ մընար, դեռ մընար,
Լըսէր ուրիշ սիրոյ խօսքեր մայրական.
Սիրտն անոր գերդ Աւետարան մը կարդար,
Աչքին դընէր մաս մ'հանդերձէն ոսկեման:

Գէր կարենար ոսկի սօլերն համբուրել,
Վայրկեան մ'երգել հայրենաշունչ շարական,
Տըղայաբար երկու ձեռքերն երկարել,
Որ հասնէին պարանոցին մայրական:

Բայց բոցավառ հրեշտակներէն աւելի,
Կողին հիմա ոչ քար ունէր, ոչ փուշեր.
Սիրտը քոչուն՝ ինչպէս նոյեան աղանի,
Խաղաղութեան դալարագեղ ճիւղ մ'ունէր:

Թեւ պիտի տար տեսիլն իրեն լեռնէ լեռ,
Նաւ պիտ'ըլլար ծովերուն մէջ ալեկոծ.
Աստուածամայրն իրեն համար ուխտ ունէր,
Եւ «Եղիցի»ն՝ սիրոյ հրդեհ, սիրոյ բոց:

Ու նա իջաւ Սեւանէն վար ցնծագին,
Երկիր սիրող նառագայթի մ'հանգունակ.
Սիրտը բացաւ Արագածին, Մասիսին,
Որոնց փառքերն երագած էր շարունակ:

Հողն համբուրեց, սիրեց հիւզակ ու դաշտեր,
Երկինքը լի մարտիրոսի դէմքերով.
Սահակ, Մեսրոպ, Խորենացին ալեհեր
Կը քրէին մտփի ամրոց՝ իրար բով:

Ո՛վ արագանգ երագներու պատանի,
Աստուած գիտէր աստղի փոխել «Եղիցի»ն,
Եւ աստղն անցաւ մեր ափերէն սիրելի
Հոն հանգչելու՝ որ սուրբ Ղազար կը կոչուի:

Բ. - ԱՆՍԻՄՈՒՆ ՔՈՅԼԵՐ

Ճամբաներէն քայլեր կ'անցնին անաղմուկ,
Կը հետեւի շուք մը ճերմակ, քափանցիկ,
Ինչպէս շողեր, որոնց հըրումն է փափուկ,
Ծաղիկներուն եւ դէմքերուն գեղեցիկ:

Հոգիացած երանութիւնն է՝ կարծես,
Որ կը փարի վաղնջական յուշերուն.
Սարսուռ կու տայ գարնանային սիւքի պէս
Ածուններուն եւ երկնին ասմագուն:

Կ'անցնին հանդարտ անդաստանէ անդաստան,
Ու սուրբ տեղեր կը սրբանան աւելի.
Կողին ամբողջ կը փոխուի գերդ խնկարան,
Երբոր կ'երգեն երեքսրբեան մեղեդի:

Ո՛րքան նըման է դըրախտի քայլերուն,
Երբոր կու գար Աստուած Եւան գրգռելու.
Ու Մըլիքա՛ր չունի ուրիշ քաղցրութիւն,
Քան այս կողին՝ ուր կայ կըրօնք, Հայութիւն:

Ամէն անկիւն տեղահարաւոր սիրտ մ'ունի,
Ամէն կամար կը նըմանի երկնքի.
Իր մըմունջներն աներեւոյթ կը յածին,
Որոնք վիշտ են եւ յաղթանակ հաւատփի:

Կը խոնարհին դափնեվարդերն հեգօրէն,
Ճամբաներէն անցնող լուսեղ անունին.
Սուրբ ցօղի պէս՝ Մըլիքա՛րի աչքերէն
Կը շողայ սէրն, օծում տալու կողին:

Եթե խորհուրդ մ'ունի ամեն սրբավայր,
Նարեկ մ'է սուրբ սրտով կերտած այս կղզին.
Դունեք ունի արքայութեան հաւասար,
Ուր կը մտնէ փառաւորեալ լոկ մարմինն:

Ճամբաներէն քայլեր կ'անցնին անաղմուկ,
Ու կ'ընկերէ Սէրը շողի պէս ցնծուն.
Փոքրիկ աշխարհ մ'ուր ոչինչ կայ խուսափուկ
Մէկ արեւն է արշալոյս միւս արեւուն:

Գ. - ԱՌԱՌՈՏ ԼՈՒՍՈՅ

Ճառագայթ մ'ինկաւ իմ դէմքիս վըրան,
Զանգակներու ձայնն՝ աղօթք ինձ համար,
Հոգիս պաղատանք լուսեղէն օրումն.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Սոխակին երգով կու գայ այգաբաց
Բոյներն են լեցուն հրնուանով անառ,
Աղօթարան է տիեզերքն անծայր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Ծաղիկներն առին դարձեալ նոյն գոյներ,
Անմեղուքիւնն է շրմորիք սրբարար,
Իրենց գեղն արդէն նըւագ է եւ սէր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ,
Երկինք եւ երկիր կը կանչեն իրար,
Ամէն էակ նոյն լարն ունի սիրոյ.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Ո՛հ, ի՛նչ հոգեքով առաւօտ է այս,
Ուր չըկայ պատրանք եւ մտքի խաւար,
Կեանք է ամէն կողմ եւ սիրտ է աշխարհս.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Բարձրացաւ արմինն հորիզոնէն վեր.
Զատիկ է կարծես, կերոն՝ ամէն ծառ.
Բընուքիւնն՝ աղօթք, տիեզերքն է սէր.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Ո՛հ, երանի քէ չըլլար մութ գիշեր,
Նայէր ինձ Աստուած լոյսի մէջ պայծառ,
Երգով ապրէի ինչպէս հրեշտակներ.
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար:

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱԾ ԵՆՔ

ԱԹՄԱՃԵԱՆ ՄԱՌԻ. - Ոսկի գեղօն (Քերթուած-
ներ 1960-1967): Փարիզ, 1967, էջ 143:

ԱՀԱՐՈՆԵԱՆ ԳԵՐՍԱՄ. - Խոհեր յոնամեակի ա-
ւարտին (1915-1965): Պէյրուս, տպ. Ատլաս,
1966, էջ 348:

ԱՀԱՐՈՆԵԱՆ Կ. Յ. - (Խմբագրող). - Հիւսէյնիկ:
Պոսթըն, տպ. Հայրենիք, 1965, էջ 251:

ԱՂԱԼԵԱՆ Ն. - Ամբողջական երկեր: Ա. Հատոր.
Կրական - քննադատական երկեր (Մատենաշար
«Համազգային»): Պէյրուս, տպ. Լա Ֆոթո-
ֆրէս, 1959, էջ Լ+455:

ԱՂԱԼԵԱՆ Ն. - Ամբողջական երկեր: Բ. Հատոր.
Սայաթ Նովայի հետ (Մատենաշար «Համազ-
գային»): Պէյրուս, տպ. Համազգային, 1966,
էջ 248:

ԱՂԵՔՍԱՆԴՐԵԱՆ ՏՈՔԹ. ՎԱՐԴԱՆ. - Մենամարտ
մինչեւ մահ (Վէպ): Ֆրանսերէնէ թրգմ. Եր-
ուանդ Գրաճեան: Պէյրուս, տպ. Սեւան, 1966,
էջ 205:

ԱՃԷՄԵԱՆ ՀԱՅԿ. - Հայ արիւնի ձայնը: Թեհրան,
տպ. Ալիք, 1967, էջ 46:

ԱՐԱՐԱՏ ԱՆԴՐԱՆԻԿ. - Անաւարտ ուղին (Բանա-
ստեղծութիւններ 1946-1962): Պէյրուս, տպ.
Սեւան, 1964, էջ 87:

ԱՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՍԻՍ. - Կեանքի սէնֆոնին: Պէյ-
րուս, տպ. Մշակ, 1966, էջ 52:

ԱՐՄԻՍ. - Դրուագներ նկարչական կեանքէս:
Հալէպ, Տպ. Ոսկետառ, 1965, էջ 136+22 նկար:

ԲԱՐԱՅԵԱՆ ԺՈՐԺ. - Կեանքի հետ (Քերթուած-
ներ): Թեհրան, տպ. Մոդերն, 1967, էջ 102:

ԲԵԴԻՆ ՍԻՐԱՔ. - Սիրոյ եւ կարօտի երգեր:
Թեհրան, տպ. Մոդերն, 1966, էջ 171:

ԲԻԴԱՆԴ ԷԼԼԷՆ. - Սարէ բորչէ (Հերոսավէպ):
Պէյրուս, տպ. Համազգային, 1967, էջ 81:

ԳԱԼԷՄՔԵԱՐԵԱՆ ԶԱՐՈՒՀԻ. - Օրեր եւ դէմքեր:
Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1965, էջ 417:

ԳԱԼՅԱՅԵԱՆ Յ. ԱԻԵՏԻՍ. - Տասը մանկապատ-
նեկան թատերգութիւն: Իսթանպուլ, 1965, էջ
125:

ԳԱԼՅԱՅԵԱՆ ՏՈՒՆ. - Հարեւրամեայ յիշատակա-
րան, 1866-1966, Գալֆայեան Տան: Պատրաս-
տեցին՝ Յակոբ Զինար եւ Պերճ Էրզիկան: Իս-
թանպուլ, տպ. Օյա, 1966, էջ 304:

ԴԻԼԷԿԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ. - Կուսակրօնութիւն ու
Հայաստանեայց եկեղեցին: Լոնտոն, Հրա-
ւարք, 1966, էջ 13 (մատենախոյ):

ԴՈՎԱՅԵԱՆ ՄԵԼԻՆԷ. - Յուշեր: Երուսաղէմ,
տպ. Ս. Յակոբեանց, 1965, էջ 379:

ԴԵՄԻՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ Ծ. ՎՐԴ. - Դիւան Ատր-
պատականի Հայոց Պատմութեան: Թաւրիզ
(Թեհրան), տպ. Նուրբախ, 1966, էջ 192:

ԵԱԳՈՒՊԵԱՆ ՆԱԶԱՐԷԹ Գ. - Յանուն երջանկու-
թեան (Յուշեր): Գահիրէ, տպ. Յուսարեք,
1960, էջ 139:

ԵԱՓՈՒՃԵԱՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ Յ. - Յիշատակարան
Բումաթիկինի (Հրա. Բումաթիկինի Հայրենակցա-
կան միութեան): Պէյրուս, տպ. Ատլաս, 1967,
էջ 288:

ԵԳԱՆԵԱՆ Խ. (Խ. ԶԱԼԷՆ). - Պոկուած թերթիկներ
- Մէր, Կրակ, Կարօտ, Երկիր (Քերթուածներ):
Թեհրան, տպ. Նուրբախ, 1965, էջ 144:

ԵՂԻՎԱՐԴ (Եղիշէ Պարք. Տէրտէրեան). - Օտա-
րական: Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց,
1966, էջ 218:

ԷՌՆԱՆՏԷՍ ԽՈՍԷ. - Մարթին Ֆիէռօ Կաւչոն եւ
Մարթին Ֆիէռոյի վերադարձը (Թրգմ. Սիսակ
Գալայճեան): Պուէնոս Այրէս, տպ. Արարատ,
1965, էջ 287:

ԹԱՊԱԳԵԱՆ ԵՓՐԵՄ ՎՐԴ. - Աւետարանի ճամ-
բով: Նոր Զուղա - Սպահան, տպ. Ս. Ամենա-
փրկիչ վանուց, 1966, էջ 79:

ԹԻՐԶԵԱՆ ՍՈԿՐԱՏ Յ. (Ս. ԿՈՒՆ). - Սլաքներ եւ
դէմքեր: Բ. Հատոր: Պուէնոս Այրէս, տպ. Ա-
րարատ, 1968, էջ 188: